

## ՀՀ Ֆինանսների նախարարություն

### Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 52/1

4 դեկտեմբերի 2015 թ.

Քննարկվեց Ա/Ձ Համլետ Հարությունյանի 21.10.2015 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ 08.10.2015 թ-ի թիվ 6111540 ակտի դեմ:

#### Ա/Ձ Համլետ Հարությունյանի գանգատում բերված փաստարկները.

2015 թ-ի հոկտեմբերի 10-ին փոստով ստացվել է ՀՀ ՖՆ Նոր Նորքի հարկային տեսչության 08.10.2015 թ-ի թիվ 6111540 ակտի օրինակը, համաձայն որի Ա/Ձ Համլետ Հարությունյանին առաջադրվել է տուգանք՝ 150.000 դրամի չափով՝ հսկիչ դրամարկղային մեքենայի շահագործման կանոնների խախտում հայտնաբերելու պատճառաբանությամբ:

Ակտում արձանագրված է, որ հարկային տեսուչ Սամվել Զաքարյանի կողմից 04.09.2015 թ-ին ժամը 17:05-ին ք.Երևան, Ռուբինյանց 28/1 հասցեում գտնվող մթերային խանութից կատարվեց գնում 2180 դրամի չափով իշխան ձուկ, որի մեկ կիլոգրամի արժեքն է 1700 դրամ, ընդհանուր 1.280 կգ, որի դիմաց վճարումը կատարվեց կանխիկ դրամով: Գանձապահ Լիանա Իսրայելյանը գումարը չմուտքագրեց ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չտրամադրեց: Ստուգում անցկացնող հարկային ծառայողների կողմից ներկայացվեցին ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետ ժամը 17:11-ին ՀԴՄ-ից դուրս բերվեց գեթ հաշվետվությունը՝ 23770 դրամ ընդհանուր գումարով, որում ներառված չէր կատարված արժեքը: Զեթ հաշվետվությունը դուրս բերելուց հետո կատարված վճարման արժեքը՝ 2180 դրամը, ժամը 17:11-ին մուտքագրվեց ՀԴՄ, դուրս բերվեց կտրոն և ժամը 17:12-ին նորից դուրս բերվեց գեթ հաշվետվությունը՝ 25950 դրամ ընդհանուր գումարով: Ստուգմամբ պարզվեց, որ տնտեսավարող սուբյեկտի կողմից խախտվել են ՀՀ կառավարության 01.08.2013 թ-ի թիվ 846-Ն որոշմամբ հաստատված հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման կարգի 17-րդ կետի և 23-րդ կետի պահանջները, համաձայն նույն կարգի 40-րդ կետի 2-րդ ենթակետի ՀԴՄ-ի կտրոնի չտրամադրումը, այդ թվում՝ ստացված կանխավճարի դիմաց դիտվում է ՀԴՄ-ների շահագործման կանոնների խախտում: Արդյունքում տնտեսավարող սուբյեկտին առաջադրվել է տուգանք 150.000 դրամի չափով:

Իրականում Ա/Ձ Համլետ Հարությունյանի կողմից թույլ չի տրվել ՀԴՄ կիրառման շահագործման կանոնների խախտում այն պարզ պատճառով, որ 04.09.2015 թ-ին ժամը 17:05-ի դրությամբ որևէ մեկը Ռուբինյանց 28/1 հասցեում գտնվող մթերային խանութից կանխիկ դրամով իշխան ձուկ չի գնել:

Այսպես, 2015 թ-ի սեպտեմբերի 4-ին ժամը 16:56-ին Ռուբինյանց 28/1 հասցեում գտնվող մթերային խանութ են մտել երկու անձինք, ներկայանալով, որ իրենք Նոր Նորքի ՀՏ-ի հարկային ծառայողներ են, դիմում են խանութի վաճառողուհի Լիանա Իսրայելյանին, որպեսզի նա ՀԴՄ-ից դուրս բերի այդ օրվա վաճառքի գծով գեթ հաշվետվությունը՝ օրվա հասույթը հաշվառելու նպատակով: Լիանա Իսրայելյանը

անմիջապես խանութ է կանչել այդ պահին մոտակայքում գտնվող Մովսես Հարությունյանին (Ա/Ձ Համլետ Հարությունյանի որդին), որն էլ ՀԴՄ-ից հանելով օրվա ամբողջական առևտրի վերաբերյալ զեթ հաշվետվությունը, այն տվել է հարկային ծառայողներին: Այնուհետ, հարկային ծառայողներից մեկը սկսել է համոզել, որ խանութի վրա մեկ տարուց ավել է, որ ՀԴՄ ակտ չի արձանագրվել և իրենք ունեն Ա/Ձ Համլետ Հարությունյանի վրա բացված ՀԴՄ կիրառման ճշտության ստուգման հանձնարարագիր և, որ պետք է անպայման ակտ գրեն: Այդ ժամանակ կանչել են նաև Ա/Ձ Համլետ Հարությունյանին, որը դեմ է եղել ՀԴՄ կիրառման ճշտության խախտման տկտ կազմելուն: Նույն պահին մյուս հարկային ծառայողը ժամանակը զուր չվատնելով, առանց որևէ մեկի մասնակցության, խանութի ՀԴՄ-ից ժամը 17:11-ին հանում է զեթ հաշվետվությունը, հետո ՀԴՄ է մուտքագրում 2180 դրամ, այնուհետ նորից հանում է զեթ հաշվետվություն, որի մեջ ներառված է մուտքագրված գումարը: Իր կատարած գործողությունները հարկային տեսուչը պատճառաբանել է նրանով, որ ժամը 17:05-ին հարկային ծառայողի կողմից կատարվել է իշխան ձկի գնում, որի դիմաց տրված 2180 դրամ գումարը խանութի վաճառողուհի Լիանա Իսրայելյանը իբր չի մուտքագրել ՀԴՄ և չի տրամադրել կտրոն:

Վերոգրյալը բաժարձակ չի համապատասխանում իրականությանը: Մթերային խանութի տարբեր կետերում, անվտանգության նկատառումներից ելնելով, օրենքով սահմանված կարգով տեղադրված են տեսախցիկներ, այդ թվում նաև խանութի այն կետում, որտեղ կատարվում է ձկան վաճառքը: Միաժամանակ խանութը տեսախցիկներով հսկելու վերաբերյալ զգուշացումները փակցված են խանութի տարբեր մասերում: Տեսախցիկները միանշանակ ֆիքսել են, որ 2015 թ-ի սեպտեմբերի 4-ին, ժամը 17:05-ին, Երևանի Ռուբինյանց 28/1 հասցեում գտնվող մթերային խանութից որևէ ձկան վաճառք տեղի չի ունեցել:

Ըստ երևույթին՝ Նոր Նորքի ՀՏ-ի հարկային ծառայողները այնքան են շտապել անպայման ՀԴՄ ճշտության խախտում արձանագրելու, որ չեն նկատել տեսախցիկների առկայության վերաբերյալ զգուշացումները: Հակառակ դեպքում օրինախախտում չէին կատարի:

Ա/Ձ Համլետ Հարությունյանը պարտավորվում է ներկայացնել վերոգրյալի վերաբերյալ ապացույցները, այդ թվում՝ 2015 թ-ի սեպտեմբերի 4-ին, ժամը 16:56-ից մինչև ժամը 17:12 ժամանակամիջոցն ընկած տեսաձայնագրությունը:

Միաժամանակ, ակտում բացակայում է գրառումը ակտը բողոքարկվելու ժամկետի և մարմնի վերաբերյալ կամ խախտվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի և 55-րդ հոդվածի 4 կետի պահանջները:

Ա/Ձ Համլետ Հարությունյանի հարկային պարտավորությունը 01.10.2015 թ-ի դրությամբ կազմում է շուրջ 1.300.000 դրամ, որը չի վճարվել ֆինանսական ծանր վիճակում գտնվելու հետևանքով:

Վերը նշվածից ելնելով, Ա/Ձ Համլետ Հարությունյանը խնդրում է ՀՀ ՖՆ Նոր Նորքի հարկային տեսչության 08.10.2015 թ-ի թիվ 6111540 ակտը համարել չեղյալ:

**«Ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը».**

«ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «ՖՆ Նոր Նորքի ՀՏ պետի ժ/պ 12.08.2015 թ-ի թիվ 6111540 հանձնարարագրի համաձայն Ա/Ձ Համլետ Հարությունյանի մոտ իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է «ՖՆ Նոր Նորքի ՀՏ 08.10.2015 թ-ի թիվ 6111540 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 150.000 դրամ:

Ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ հարկային տեսուչ Սամվել Զաքարյանի կողմից 04.09.2015 թ-ին ժամը 17:05-ին ք.Երևան, Ռուբինյանց 28/1 հասցեում գտնվող մթերային խանութից կանխիկ դրամով կատարվել է 2180 դրամի գնում՝ գնվել է իշխան ձուկ, որի մեկ կիլոգրամի արժեքը կազմել է 1700 դրամ: Գանձապահ Լիանա Իսրայելյանը գումարը չի մուտքագրել ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրել: Ստուգում անցկացնող հարկային ծառայողների կողմից ներկայացվել են ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետև ժամը 17:11-ին ՀԴՄ-ից դուրս է բերվել Z հաշվետվությունը՝ 23770 դրամ ընդհանուր գումարով, որում կատարված վճարումը ներառված չի եղել: Z հաշվետվությունը դուրս բերելուց հետո կատարված վճարման արժեքը՝ 2180 դրամը, մուտքագրվել է ՀԴՄ, դուրս է բերվել կտրոն և ժամը 17:12-ին նորից դուրս է բերվել Z հաշվետվությունը՝ 25950 դրամ ընդհանուր գումարով: Ստուգմամբ պարզվել է, որ տնտեսվարող սուբյեկտի կողմից խախտվել են «ՀՀ կառավարության 01.08.2013 թ-ի թիվ 846-Ն որոշմամբ հաստատված հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման կարգի 17-րդ և 23-րդ կետերի պահանջները: Արդյունքում կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված տուգանքը՝ գումարով 150.000 դրամի չափով:

Ա/Ձ Համլետ Հարությունյանի կողմից Հանձնաժողովին է ներկայացվել 2015 թ-ի սեպտեմբերի 4-ի ժամը 16:56-ից մինչև ժամը 17:12-ն ընկած ժամանակահատվածի վերաբերյալ խանութում գտնվող թվով չորս տեսախցիկների միաժամանակյա տեսագրությունը:

Հանձնաժողովի, ինչպես նաև համապատասխան մասնագետների կողմից ուսումնասիրվել է նշված տեսագրությունը: Ուսումնասիրության արդյունքները վկայում են այն մասին, որ տեսագրությունը մոնտաժված է, հետևապես այն չի կարող հիմք հանդիսանալ Ա/Ձ Համլետ Հարությունյանի գանգատում բերված պնդումները հաստատված համարելու, ինչպես նաև Ակտի 1-ին կետում նկարագրված խախտումը ժխտելու համար: Ա/Ձ Համլետ Հարությունյանին առաջարկվել է ներկայացնել համապատասխան տեսագրությունների բնօրինակները, որոնք, սակայն, չեն ներկայացվել:

Քննարկման ընթացքում հարկային տեսուչ Սամվել Զաքարյանը նշեց, որ 04.09.2015 թ-ին ք.Երևան, Ռուբինյանց 28/1 հասցեում գտնվող մթերային խանութից իր կողմից նախ գնվել է մեկ հատ սեխ, որի դիմաց վճարված գումարը սահմանված կարգով մուտքագրվել է ՀԴՄ և տրամադրվել է համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն: Այնուհետև, ժամը 17:05-ին իր կողմից գնվել է իշխան ձուկ, որի դիմաց

կանխիկ վճարված 2180 դրամի դիմաց համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրվել: Մասնավորապես, հարկային տեսուչ Սամվել Զաքարյանի կողմից գնվել է իշխան ծուկ կենդանի վիճակում, որը խանութի աշխատակցի կողմից մաքրվելուց և կտրատվելուց հետո տրամադրվել է գնորդին: Ընդ որում, խանութի այն հատվածում, որտեղ վաճառվում է կենդանի ծուկը, հսկիչ-դրամարկղային մեքենա տեղադրված չէ: Փաստն արձանագրելուց հետո ստուգումն իրականացնող պաշտոնատար անձանց համապատասխան գործողություններով (դրանք նկարագրված են Ակտի 1-ին կետում) հիմնավորվել է Ա/Ձ Համլետ Հարությունյանի կողմից ՀՀ կառավարության 01.08.2013 թ-ի թիվ 846-Ն որոշմամբ հաստատված հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման կարգի 17-րդ և 23-րդ կետերի պահանջները խախտված լինելու հանգամանքը, որի համար և կիրառվել է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության միջոցը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ 08.10.2015 թ-ի թիվ 6111540 ակտը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

**Հանձնաժողովի նախագահ՝**

*Գևորգ Կարամյան*  
**ԳԵՎՈՐԳ ԿԱՐԱՄՅԱՆ**

